

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԿԳ նախարարի

26 հունվարի 2007թ. N29-Ն հրամանի

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿ**

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից										
		2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ
1.	Տնօրեն	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
2.	Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ	-	-	0,5	1	1	1	1	1	1,25	1,25	1,25
3.	Բուժքույր	0,5	1	1	1	1	1	1,5	1,5	1,5	1,5	1,5
4.	Գլխ. հաշվապահ	0,5	0,5	1	1	1	1	1	1	1	1	1
5.	Հաշվետար- գանձապահ	0,5	0,5	1	1	1	1	1	1	1	1	1
6.	Տնտեսավար	0,5	0,5	1	1	1	1	1	1	1	1	1
7.	Պահեստապետ	-	-	-	-	-	-	-	-	1	1	1
8.	Գործավար	0,5	0,5	1	1	1	1	1	1	1	1	1
9.	Շեֆ խոհարար	-	-	-	-	-	-	--	-	1	1	1
10.	Խոհարար	1	1	1	1	1	2	2	2	1	1	2
11.	Խոհարարի	0,5	0,5	1	1	1	1	1	1	1	1	1

	օգնական											
12.	Օժանդակ բանվոր	0,5	0,5	0,5	0,5	1	1	1	1	2	2	2
13.	Շենքերի, սարքավորումների սպասարկող և նորոգող բանվոր	-	-	0,5	0,5	0,5	0,5	1	1	1	1	1
14	Գերձակ	-	0,5	0,5	0,5	0,5	1	1	1	1	1	1
15.	Լվացարար /շուրջօրյա հաճախում ունեցող մանկապարտեզում/	0,75	1	1	1,5	2	2,25	2,5	2,5	2,5	3	3
16.	Լվացարար /շուրջօրյա հաճախում չունեցող մանկապարտեզում/	0,75	1	1	1,25	1,75	1,75	2	2	2,5	2,5	2,5
17.	Հավաքարար	-	-	-	0,5	0,5	0,5	1	1	1	1	1

18. Ինքնուրույն կենտրոնական ջեռուցում /ջրի, գազի, գոլորշու/ ունեցող մանկապարտեզներում ջեռուցման սեզոնում սահմանվում է հնոցապանի հաստիք, յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ դրույքի հաշվով: Հնոցապանների ընդհանուր թվից մեկ միավոր սահմանվում է ամբողջ տարվա համար:

19. Կենտրոնացված ջերմամատակարարման /ՁԷԿ/ դեպքում ջերմային կետ կամ էլեվատոր ունեցող մանկապարտեզներում սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի մեկ հաստիք, իսկ բոլլերի և պոմպի դեպքում, երբ պահանջվում է շուրջօրյա հերթապահություն, սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք, յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ միավորի հաշվով:

20. Սառնարանային սարքավորում, էլեկտրասալիկ և այլ էլեկտրական ջեռուցման սարքավորումների առկայության դեպքում, 4 և ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում /եթե հաստիքներում չի նախատեսված փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք/ սահմանվում է 0,5 միավոր փականագործ -էլեկտրամոնտյորի հաստիք:

21. Ինքնուրույն շենք և երկու ու ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում սահմանվում է դռնապանի հաստիք՝ դռնապանի հաստիքը սահմանվում է մաքրման ենթակա 1000-2000մ² տարածության համար 1 միավոր:
22. Մրգի այգի կամ դեկորատիվ տնկիներ ունեցող 1,5 հա մակերեսից ոչ պակաս դեկորատիվ բուսականությամբ հողամաս ունեցող մանկապարտեզներում սահմանվում է այգեպանի հաստիք:
23. Պահակի հաստիքը սահմանվում է օրենքով սահմանված կարգով:
24. Ավտովարորդի հաստիքային 1 միավոր կարող է սահմանվել ավտոտրանսպորտի առկայության դեպքում:
25. Սահմանել, որ եթե առանձին համայնքներում հաստատությունների կողմից աշխատանքի պայմանների և ծավալային ցուցանիշների համաձայն հնարավոր չէ կիրառել սույն օրինակելի հաստիքացուցակը, աշխատողների թվի, աշխատավարձի ֆոնդի և բյուջետային հատկացումների սահմաններում կատարել փոփոխություններ և հաստատություններում գոյություն ունեցող հաստիքացուցակը աստիճանաբար համապատասխանեցնել սույն հաստիքացուցակին:

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ 1 ԽՄԲԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ

N	Նախադպրոցական խմբեր Պաշտոնի անվանումը	6-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում				5-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում					
		8 ժամ	9 ժամ	10 ժամ	12 ժամ	24 ժամ	8 ժամ	9ժ	10,5 ժամ	12 ժամ	24 ժամ
1.	Դաստիարակ	1,17	1,5	1,67	2	2,2	1,12	1,25	1,55	2	2
2.	դաստիարակի օգնական	1	1,25	1,25	1,5	1,5	1	1,1	1,15	1,25	1,5
3.	Մտորային խմբեր	8 ժամ,	9 ժամ	10,5 ժամ	12 ժամ	24 ժամ	8 ժամ	9 ժամ	10,5	12 ժամ	24 ժամ
	մտորային խմբի	1,4,	1,5	1,67	2	3.6	1,12	1,25	1,55	2	3
	դաստիարակներ										
	սանիտար-դայակ	1,3,	1,33	1,45	1,75	2,75	1	1,1	1,3	1,5	2,5

4. Երաժշտական ղեկավար (երաժշտության դաստիարակ) – մանկապարտեզի՝ 2 տարեկան և ավագ հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին 0,25 դրույք:

5. Պարուսույց՝ պարի խմբավար - մանկապարտեզի՝ 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք:

6. Ֆիզկուլտուրայի հրահանգիչ - մանկապարտեզի՝ 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք:

7. Լողի մարզիչի հաստիք (լողավազանի առկայության դեպքում) - մանկապարտեզի՝ 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր երկու խմբի համար՝ 0,25 դրույք:

8. Առանձին վայրերում, որտեղ նախադպրոցական հաստատություններում տարիքային խմբերում երեխաների խտությունը գերազանցում է նախատեսված նորմատիվները մոտ երկու անգամ, հիմնադրի կողմից կարող է լրացուցիչ հատկացվել դաստիարակի 1 հաստիքային և սանիտար- դայակի կամ դաստիարակի օգնականի 0,5 միավոր:

9. Ներառական մանկապարտեզներում, որտեղ տարիքային խմբերում համալրված են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, հիմնադրի կողմից սահմանվում է լրացուցիչ՝ հատուկ մանկավարժ(ներ)ի (սուրդմանկավարժ, լուգուպեդ, հոգեբան) մինչև 2 միավոր հաստիք:

10. Սահմանել, որ առանձին վայրերում, որտեղ նախադպրոցական հաստատություններում տարիքային խմբերում երեխաների խտությունը գերազանցում է նախատեսված նորմատիվները մոտ երկու անգամ, հիմնադրի կողմից կարող է լրացուցիչ հատկացվել դաստիարակի 1 հաստիքային և սանիտար- դայակի կամ դաստիարակի օգնականի 0,5 միավոր:

11. Նախադպրոցական հաստատություններում կարող են սահմանվել արձակուրդ գնացող տնօրեններին, դաստիարակներին, ինչպես նաև սանիտար-դայակներին, հավաքարարներին, գիշերային դայակներին, դաստիարակների օգնականներին, խոհանոցի աշխատողներին և լվացարարներին փոխարինողների հաստիքներ՝ պայմանագրային կարգով՝ փոխարինող անձանց վճարման համար նախատեսված հատկացումների սահմաններում: